Chicago

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

# Diocese of the Armenian Church of North America

314 East 35th Street, New York 16, N.Y. ★ MUrray Hill 6-0710

Archbishop Sion Manoogian
Primate

Թիւ 182
Մարտ 30, 1959

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Աւագ Քհնյ. Փափազեան
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Շիգակօ.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք 1959 Մարտ 16 թուակիր Ձեր նամակը, որով կը հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ, Մարտ 1ի կիրակին գումարուած Ծխական Ժողովին մէջ, 77 իրաւասու անդամներու ներկայութեան, կատարուած է Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը։

Նախ դիտել կու տանք թէ, ինչպէս դուք կը տեղեկացնէք Ձեր յիշեալ տեղեկագիրին մէջ, քուէարկութեան ատեն եօթը քուէատուներու անունները չէք արձանագրած։ Ատիկա տարօրինակ կը թուի, քանի որ 77 հոգի միայն ներկայ եղած են, եւ որուն համար բողոք կը ներկայացնէ Պրն. Ս.Յալխանեան։

Նկատելով որ ուրիշ գրաւոր բողոք չէ եղած, եւ թելադրելով որ ուրիշ անգամ նախանձախնդիր ըլլաք կանոնական տրամադրութեանց գործադրութեան, կը վաւերացնենք Ձեր մասնակի ընտրութիւնը հետեւեալ կարգով.—

Տիարք՝ Տոքթ. Համբար Եագըճեան
Մակար Նահապետեան
Ճան Քակլայեան
Խաչիկ Ճէրանեան

Կօրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք Ձեզ եւ պատուարժան Ծխական Խորհուրդին ներդաշնակ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի պայծառութիւն Հայց. Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի